ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/68

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ն. Մանուկյանի (լիազորագիր, տրված՝ 04.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8881-2019 գրությամբ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը՝ պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 24.05.2019թ. թիվ 01.3/11/13020-19 գրության հիման վրա, 29.05.2019թ. թիվ 26/26-1/8881-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն 24.06.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպված ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ՓՔՎ-3 ծածկագրով գնման ընթացակարգին՝ համապատասխան հայտ և գնային առաջարկ ներկայացնելով 06.05.2019թ.:

Որպես բարեխիղճ հարկատու, հայտ ներկայացնելուց առաջ Ընկերությունը մուտք է գործել պետական եկամուտների կոմիտեի www.taxcervice կայքում տեղակայված տեղեկատվական բազան և համոզվել, որ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

22.04.2019թ. դրությամբ Ընկերությունը ունի նաև տեղեկանք՝ տրամադրված ՊԵԿ-ի կողմից հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ:

Եկամտահարկի հաշվետվության ներկայացման և առաջացած հարկերի վճարման ժամկետ օրենքով սահմանված է մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը: Ապրիլ ամսվա եկամտահարկի հաշվետվությունն Ընկերությունը ներկայացրել է 06.05.2019թ. համաձայն որի առաջացել է վճարման պարտավորություն եկամտահարկի գծով և դրոշմանիշային վճարի մասով (վճարման ժամկետ մինչև 20.05.2019թ.):

Միայն այս միջադեպի ժամանակ է Ընկերությունը տեղեկացել, որ ՊԵԿ տեղեկատվական բազայի ծրագրի ալգորիթմը կառուցված է այնպես, որ ցավոք սրտի երևում է հարկային պարտավությունների մասին տեղեկատվությունը բոլոր հարկատեսակների և վճարների մասով, իսկ դրոշմանիշային վճարի մասով տեղեկատվությունը բացակայում է:

Այնուհանդերձ՝ 13.05.2019թ. ժամը 09:48 Ընկերությունը կատարել է դրոշմանիշային վճարի 2 000 ՀՀ դրամի փոխանցում և որպես վերը նշված ծածկագրով գնման ընթացակարգի միակ մասնակից՝ Ընկերությունը մասնակցել է թիվ 11, 12, 13, 14, 15

չափաբաժինների նախահաշվային գների գերազանցման պատճառով անցկացվող գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցություններին՝ ժամը 14:42-ին ուղարկելով նոր՝ նվազեցված գնային առաջարկ:

13.05.2019թ. Ընկերության կողմից ներկայացված գներն՝ ըստ չափաբաժինների կազմում են՝

N 11 9 900 ՀՀ դրամ

N 12 9 000 ՀՀ դրամ

N 13 7 980 ՀՀ դրամ

N 14 6 000 ՀՀ դրամ

N 15 4 800 ՀՀ դրամ

և նշված չափաբաժիններով Ընկերությունը միակ մասնակիցն է:

Ընկերությունը հայտնել է, որ եթե կասկածներ ունենար, որ առկա է դրոշմանիշային վճարի չկատարած պարտավորություն, 13.05.2019թ. Ընկերությունը չէր մասակցի գների նվազեցման նպատակով հրավիրված բանակցություններին և Ընկերությունը չէր հայտնվի տվյալ անցանկալի իրավիճակում:

Նման իրավիճակում չհայտնվելու նպատակով Ընկերությունը լրացուցիչ վճարել է ևս 10 000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճար ամբողջ 2019թ. համար, քանի որ ՊԵԿ տեղեկատվական բազան այժմ էլ աշխատում է նույն սկզբունքով և գնումների ընթացակարգին մասնակցելուց առաջ հնարավոր չէ տեղեկանալ և համոզվել դրոշմանիշային վճարի ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությանը և բացառել նման իրավիճակում հայտնվելու հնարավորությունը:

Դրանում կարող եք համոզվել ՊԵԿ-ից լրացուցիչ համապատասխան տեղեկատվություն ստանալու միջոցով:

Հաշվի առնելով, վերը նշվածը և այն հանգամանքը, որ Ընկերության գործողություններում բացակայում է չարամտորեն կեղծ տվյալներ ներկայացնելու փաստը՝ Ընկերությունը խնդրել է չներառել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը բացառապես իրականացնում է գնումների գործընթացներում կնքված պայմանագրերի շրջանակներում ապրանքների ներմուծման և մատակարարման գործառույթներ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/68 ընթացակարգի շրջանակներում 06.06.2019թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.05.2019թ. թիվ 01.3/11/13020-19 գրությամբ ներկայացրել է «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/68 ընթացակարգի շրջանակներում 06.06.2019թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/68 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/68 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՓՔՎ-3» ծածկագրով գնքանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 06.05.2019թ. հայտ է ներկայացրել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ (բանակցությունների արդյունքում ձևավորված), որի ընդհանուր գինը 11-րդ չափաբաժնի

մասով կազմում է 9 900 ՀՀ դրամ, 12-րդ չափաբաժնի մասով՝ 9 000 ՀՀ դրամ, 13-րդ չափաբաժնի մասով՝ 7 980 ՀՀ դրամ, 14-րդ չափաբաժնի մասով՝ 6 000 ՀՀ դրամ և 15-րդ չափաբաժնի մասով՝ 4 800 ՀՀ դրամ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ 11-15-րդ չափաբաժինների մասով «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 1000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8881-2019 գրությունը, ՀՀ ոստիկանության 24.05.2019թ. թիվ 01.3/11/13020-19 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ

օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՓՔՎ-3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն 06.05.2019թ. հայտ է ներկայացրել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ 11-15-րդ չափաբաժինների մասով «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ (բանակցությունների արդյունքում ձևավորված), որի ընդհանուր գինը 11-րդ չափաբաժնի մասով կազմում է 9 900 ՀՀ դրամ, 12-րդ չափաբաժնի մասով՝ 9 000 ՀՀ դրամ, 13-րդ չափաբաժնի մասով՝ 7 980 ՀՀ դրամ, 14-րդ չափաբաժնի մասով՝ 6 000 ՀՀ դրամ և 15-րդ չափաբաժնի մասով՝ 4 800 ՀՀ դրամ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 1000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 07.05.2019թ. թիվ գրությունը, որի համաձայն՝ Ընկերությունը 22.04.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Համաձայն ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների 2018թ. պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար կազմել է ակտիվներ՝ 35 428 186 ՀՀ դրամ և պարտավորություններ՝ 27 657 437 ՀՀ դրամ:

Ընկերությունը ներկայացրել է նաև «Արդշինբանկ» ՓԲԸ-ի միջոցով իրականացված 13.05.2019թ. և 17.05.2019թ. վճարման հանձնարարականների պատճենները, որոնց համաձայն՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից համապատասխանաբար իրականացվել են 2 000 ՀՀ դրամի և 10 000 ՀՀ դրամի գումարի վճարումներ:

Միևնույն ժամանակ ներկայացրել է ՊԵԿ-ի 10.06.2019թ. գրությունը, որի համաձայն՝ 13.05.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

Ամփոփելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՓՔՎ-3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել **06.05.2019թ.,** մինչդեռ Ընկերությունը վճարման հանձնարարականի համաձայն՝ առաջացած պարտավորությունը մարելու նպատակով վճարում իրականացրել է **13.05.2019թ.,** այսինքն՝ Ընթացակարգին հայտ ներկայացնելու հետո միայն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք***, ***որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ*** հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ***ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը***, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը ***գերազանցող ժամկետանց պարտավորություններ:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Միաժամանակ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու*** և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված ***հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող*** կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Այսպիսով՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՓՔՎ-3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը:

Ինչ վերաբերվում է Ընկերության այն դիտարկմանը, որ ՊԵԿ տեղեկատվական բազայում գնումների ընթացակարգին մասնակցելուց առաջ հնարավոր չէ տեղեկանալ և համոզվել դրոշմանիշային վճարի ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությանը, ապա այս առումով հայտնում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Դրա հետ մեկտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն դրոշմանիշային վճարը ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հանդիսանում է հարկային եկամուտ և հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՓՔՎ-3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8881-2019 գրությամբ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**